4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող4211+տող4212+տող4213+տող4214+տող4215+տող4216+տող 4217)	x	2,471,515.6	2,471,515.6	X	2,074,104.5	2,074,104.5	X	1,840,664.5	1,840,664.5	X
	որից՝										
4211	-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	310,668.0	310,668.0	X	316,208.6	316,208.6	X	244,603.9	244,603.9	X
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	1,205,997.7	1,205,997.7	X	1,060,932.7	1,060,932.7	X	992,117.9	992,117.9	X
4214	-Կապի ծառայություններ	4214	173,621.6	173,621.6	X	196,574.2	196,574.2	X	164,615.9	164,615.9	X

4215	-Ապահովագրական ծախսեր	4215	740,697.0	740,697.0	X	449,258.7	449,258.7	X	395,012.3	395,012.3	X
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	40,531.3	40,531.3	X	51,130.3	51,130.3	X	44,314.5	44,314.5	X
4217	-Արտագերատեսչական ծախսեր	4217	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4220	ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆԽՆԵՐ (տող4221+տող4222+տող4223)	x	59,500.0	59,500.0	X	28,801.0	28,801.0	X	11,301.2	11,301.2	X
	որից՝										
4221	-Ներքին գործուղումներ	4221	1,000.0	1,000.0	X	1,009.0	1,009.0	X	343.5	343.5	X
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	58,500.0	58,500.0	X	27,792.0	27,792.0	X	10,957.8	10,957.8	X
4223	-Այլ տրանսպորտային ծախսեր	4229	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4231+տող4232+տող4233+տող4234+տող4235+տող4236+տող4237+տող4238)	x	1,864,495.7	1,864,495.7	X	1,481,896.6	1,481,896.6	X	967,471.8	967,471.8	X
	որից՝										
4231	-Վարչական ծառայություններ	4231	12,048.0	12,048.0	X	12,008.0	12,008.0	X	4,027.3	4,027.3	X
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	58,113.0	58,113.0	X	45,967.0	45,967.0	X	44,686.0	44,686.0	X
4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	81,982.0	81,982.0	X	56,634.0	56,634.0	X	30,477.2	30,477.2	X
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	33,571.0	33,571.0	X	33,893.9	33,893.9	X	21,915.7	21,915.7	X
4235	-Կառավարչական ծառայություններ	4235	24,900.0	24,900.0	X	5,900.0	5,900.0	X	5,782.2	5,782.2	X
4236	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4237	-Ներկայացուցչական ծախսեր	4237	76,732.0	76,732.0	X	40,727.0	40,727.0	X	21,905.5	21,905.5	X
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1,577,149.7	1,577,149.7	X	1,286,766.7	1,286,766.7	X	838,677.9	838,677.9	X
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող 4241)	x	50,182.6	50,182.6	X	52,101.5	52,101.5	X	29,252.4	29,252.4	X
	որից՝										
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	50,182.6	50,182.6	X	52,101.5	52,101.5	X	29,252.4	29,252.4	X
4250	ԸՆԴԱՅԻՆ ԼՈՐՈՂՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող4251+տող4252)	x	6,492,135.1	6,492,135.1	X	3,620,320.5	3,620,320.5	X	3,145,110.6	3,145,110.6	X
	որից՝										
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	6,140,150.2	6,140,150.2	X	3,140,859.1	3,140,859.1	X	2,691,560.5	2,691,560.5	X
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	351,984.9	351,984.9	X	479,461.4	479,461.4	X	453,550.1	453,550.1	X
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265+տող4266+տող4267+տող4268)	x	1,569,965.3	1,569,965.3	X	1,773,506.9	1,773,506.9	X	1,575,182.7	1,575,182.7	X
	որից՝										
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	92,338.8	92,338.8	X	91,571.7	91,571.7	X	54,955.7	54,955.7	X
4262	-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4263	-Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների վերապատրաստում)	4263	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	939,757.8	939,757.8	X	1,019,277.1	1,019,277.1	X	1,008,409.3	1,008,409.3	X

4265	-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4266	-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	86,859.7	86,859.7	X	97,860.7	97,860.7	X	66,656.0	66,656.0	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	451,009.0	451,009.0	X	564,797.4	564,797.4	X	445,161.8	445,161.8	X
4300	1.3 ՏՈՎՈՍԱՎՃԱՐՆԵՐ (ԿՈՂ4310+ԿՈՂ 4320+ԿՈՂ4330)	x	0.0	0.0	X	4,100.0	4,100.0	X	3,217.4	3,217.4	X
	այդ թվում՝										
4310	ՆԵՐՔԻՆ ՏՈՎՈՍԱՎՃԱՐՆԵՐ (ԿՈՂ4311+ԿՈՂ4312)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4311	-Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ	4411	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4312	-Ներքին վարկերի տոկոսավճարներ	4412	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4320	ԱՐՏԱՔԻՆ ՏՈՎՈՍԱՎՃԱՐՆԵՐ (ԿՈՂ4321+ԿՈՂ4322)	x	0.0	0.0	X	4,100.0	4,100.0	X	3,217.4	3,217.4	X
	որից՝										
4321	-Արտաքին արժեթղթերի գծով տոկոսավճարներ	4421	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4322	-Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	0.0	0.0	X	4,100.0	4,100.0	X	3,217.4	3,217.4	X
4330	ՓՈՆԱՈՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱՅ ՎՃԱՐՆԵՐ (ԿՈՂ4331+ԿՈՂ4332+ԿՈՂ4333)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4331	-Փոխանակման կուրսերի բացասական տարբերություն	4431	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4332	-Տույժեր	4432	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4333	-Փոխառությունների գծով տուրքեր	4433	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4400	1.4 ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ (տող4410+տող4420)	x	42,888,110.3	42,888,110.3	X	43,148,783.9	43,148,783.9	X	42,296,850.4	42,296,850.4	X
	այդ թվում՝										
4410	ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՂ4411+ԿՈՂ4412)	x	42,733,425.3	42,733,425.3	X	42,959,983.9	42,959,983.9	X	42,125,228.7	42,125,228.7	X
	որից՝										
4411	-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	42,724,155.3	42,724,155.3	X	42,959,983.9	42,959,983.9	X	42,125,228.7	42,125,228.7	X
4412	-Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	9,270.0	9,270.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4420	ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՂ4421+ԿՈՂ4422)	x	154,685.0	154,685.0	X	188,800.0	188,800.0	X	171,621.7	171,621.7	X
	որից՝										
4421	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	154,685.0	154,685.0	X	188,800.0	188,800.0	X	171,621.7	171,621.7	X
4422	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ֆինանսական կազմակերպություններին	4522	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540)	x	439,128.6	439,128.6	X	546,427.9	546,427.9	X	525,352.9	525,352.9	X
	այդ թվում՝										
4510	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (ԿՈՂ4511+ԿՈՂ4512)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4511	-Ընթացիկ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4611	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X

4512	-Կապիտալ դրամաշնորհներ օտարերկրյա կառավարություններին	4612	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4520	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (Կող4521+Կող4522)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4521	-Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4621	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4522	-Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4622	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (Կող4531+Կող4532+Կող4533)	x	439,128.6	439,128.6	X	375,462.5	375,462.5	X	354,487.9	354,487.9	X
	որից՝				X			X			X
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	52,030.2	52,030.2	X	57,623.0	57,623.0	X	42,261.6	42,261.6	X
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին	4638	27,172.8	27,172.8	X	43,472.8	43,472.8	X	39,281.4	39,281.4	X
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ (տող 4534+տող 4535 +տող 4536)	4639	359,925.6	359,925.6	X	274,366.7	274,366.7	X	272,944.9	272,944.9	X
4534	-ՀՀ այլ համայնքներին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4535	- ՀՀ պետական քյուջեին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4536	- այլ		359,925.6	359,925.6	X	274,366.7	274,366.7	X	272,944.9	272,944.9	X
4540	ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (Կող4541+Կող4542+Կող4543)	x	0.0	0.0	X	170,965.4	170,965.4	X	170,865.0	170,865.0	X
	որից՝										
4541	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	0.0	0.0	X	22,565.8	22,565.8	X	22,565.8	22,565.8	X
4542	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին	4656	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4543	-Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544+տող 4545 +տող 4546)	4657	0.0	0.0	X	148,399.6	148,399.6	X	148,299.2	148,299.2	X
	այդ թվում՝										
4544	-ՀՀ այլ համայնքներին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4545	- ՀՀ պետական քյուջեին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4546	- այլ		0.0	0.0	X	148,399.6	148,399.6	X	148,299.2	148,299.2	X
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (Կող4610+Կող4630+Կող4640)	x	2,347,067.6	2,347,067.6	X	1,108,592.8	1,108,592.8	X	1,075,074.4	1,075,074.4	X
	այդ թվում՝										
4610	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏՆԵՐ		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	այդ թվում՝										
4610	- Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության վճարներ	4711	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4620	- Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին	4712	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻԹ) (Կող4631+Կող4632+Կող4633+Կող4634)	x	2,347,067.6	2,347,067.6	X	1,108,592.8	1,108,592.8	X	1,075,074.4	1,075,074.4	X

	որից՝										
4631	-Հողարկավորության նպաստներ բյուջեից	4726	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	10,800.0	10,800.0	X	10,800.0	10,800.0	X	540.0	540.0	X
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	2,336,267.6	2,336,267.6	X	1,097,792.8	1,097,792.8	X	1,074,534.4	1,074,534.4	X
4640	ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (Կող4641)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4641	-Կենսաթոշակներ	4741	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4700	1.7 ԱՅԼ ԾԱՆՍԵՐ (Կող4710+ Կող4720+ Կող4730+ Կող4740+ Կող4750+ Կող4760+ Կող4770)	x	21,156,702.5	23,137,559.0	218,060.4	20,563,111.7	20,546,703.0	142,996.2	13,927,282.2	13,819,737.6	107,544.6
	այդ թվում՝										
4710	ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (Կող4711+Կող4712)	x	252,202.7	252,202.7	X	196,563.8	196,563.8	X	138,534.0	138,534.0	X
	որից՝							X			X
4711	- Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություններ	4811	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	252,202.7	252,202.7	X	196,563.8	196,563.8	X	138,534.0	138,534.0	X
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՒՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՈՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՐ (Կող4721+ Կող4722+ Կող4723+ Կող4724)	x	104,995.0	104,995.0	X	5,869,653.4	5,869,653.4	X	3,668,376.3	3,668,376.3	X
	որից՝										
4721	-Աշխատավարձի ֆոնդ	4821	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4722	-Այլ հարկեր	4822	0.0	0.0	X	5,757,661.6	5,757,661.6	X	3,586,762.9	3,586,762.9	X
4723	-Պարտադիր վճարներ	4823	104,995.0	104,995.0	X	111,951.8	111,951.8	X	81,573.4	81,573.4	X
4724	-Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր	4824	0.0	0.0	X	40.0	40.0	X	40.0	40.0	X
4730	ՊԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ (Կող4731)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4731	-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4740	ԲՆԱԿԱՆ ԱՐԵՏՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՍՈՒՋԱՑԱՆՎԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՄ (Կող4741+Կող4742)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4741	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4841	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4742	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	4842	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X

4750	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (Կողմ4751)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4751	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4851	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4760	ԱՅԼ ԾԱԽՍՆԵՐ (Կողմ4761)	x	13,368,923.0	13,368,923.0	X	6,120,825.4	6,120,825.4	X	2,488,307.7	2,488,307.7	X
	որից՝										
4761	-Այլ ծախսեր	4861	13,368,923.0	13,368,923.0	X	6,120,825.4	6,120,825.4	X	2,488,307.7	2,488,307.7	X
4770	ՊԱՀՈՒՑԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (Կողմ4771)	x	7,430,581.8	9,411,438.3	218,060.4	8,376,069.1	8,359,660.4	142,996.2	7,632,064.2	7,524,519.6	107,544.6
	որից՝										
4771	-Պահուստային միջոցներ	4891	7,430,581.8	9,411,438.3	218,060.4	8,376,069.1	8,359,660.4	142,996.2	7,632,064.2	7,524,519.6	107,544.6
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	2,198,916.9	2,198,916.9	X	126,587.5	126,587.5	X	0.0	0.0	X
5000	Բ. ՈՋ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍՆԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x	16,466,461.4	X	16,466,461.4	29,653,765.8	X	29,653,765.8	23,531,582.4	X	23,531,582.4
	այդ թվում՝										
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130)	x	16,458,061.4	X	16,458,061.4	29,645,365.8	X	29,645,365.8	23,531,582.4	X	23,531,582.4
	այդ թվում՝										
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113)	x	8,639,691.8	X	8,639,691.8	12,148,885.5	X	12,148,885.5	8,287,504.1	X	8,287,504.1
	որից՝										
5111	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	0.0	X	0.0	500,000.0	X	500,000.0	0.0	X	0.0
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1,247,736.0	X	1,247,736.0	2,522,543.7	X	2,522,543.7	1,131,023.3	X	1,131,023.3
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	7,391,955.8	X	7,391,955.8	9,126,341.8	X	9,126,341.8	7,156,480.8	X	7,156,480.8
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող5121+ տող5122+տող5123)	x	7,394,627.6	X	7,394,627.6	17,044,063.3	X	17,044,063.3	15,063,531.9	X	15,063,531.9
	որից՝										
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	4,415,400.0	X	4,415,400.0	11,510,698.0	X	11,510,698.0	11,330,635.5	X	11,330,635.5
5122	- Վարչական սարքավորումներ	5122	117,178.7	X	117,178.7	170,379.9	X	170,379.9	92,999.6	X	92,999.6
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	2,862,048.9	X	2,862,048.9	5,362,985.4	X	5,362,985.4	3,639,896.8	X	3,639,896.8
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	423,742.0	X	423,742.0	452,417.0	X	452,417.0	180,546.4	X	180,546.4
	որից՝										
5131	-Աճեցվող ակտիվներ	5131	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	36,500.0	X	36,500.0	70,200.0	X	70,200.0	67,473.0	X	67,473.0
5133	- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	5133	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	387,242.0	X	387,242.0	382,217.0	X	382,217.0	113,073.4	X	113,073.4
5200	1.2 ՊԱՇՏԱՐՆԵՐ (տող5211+տող5221+տող5231+տող5241)	x	8,400.0	X	8,400.0	8,400.0	X	8,400.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										

5211	- Համայնքային նշանակության ռազմավարական պաշարներ	5211	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5221	- Նյութեր և պարագաներ	5221	8,400.0	X	8,400.0	8,400.0	X	8,400.0	0.0	X	0.0
5231	- Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ	5231	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5241	-Սպառման նպատակով պահվող պաշարներ	5241	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5300	1.3 ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5311)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
5311	-Բարձրարժեք ակտիվներ	5311	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5400	1.4 ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5411+տող 5421+տող 5431+տող5441)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
5411	-Հող	5411	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5421	-Ընդերքային ակտիվներ	5421	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5431	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5441	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	5441	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	1.5 Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր եւ /կամ/կապիտալ ակտիվի ձեռք բերում	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
	Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր եւ /կամ/կապիտալ ակտիվի ձեռք բերում	5511	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6000	Գ. ՈՋ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	-4,541,000.0	X	-4,541,000.0	-4,541,000.0	X	-4,541,000.0	-18,470,775.5	X	-18,470,775.5
	այդ թվում՝										
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130)	x	-541,000.0	X	-541,000.0	-541,000.0	X	-541,000.0	-539,178.0	X	-539,178.0
	այդ թվում՝										
6110	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8111	-540,000.0	X	-540,000.0	-540,000.0	X	-540,000.0	-539,178.0	X	-539,178.0
6120	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8121	-1,000.0	X	-1,000.0	-1,000.0	X	-1,000.0	0.0	X	0.0
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8131	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6200	ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6210+տող6220)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
6210	ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8211	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6220	ԱՅԼ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6221+տող6222+տող6223)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	որից՝										
6221	- Արտադրական պաշարների իրացումից մուտքեր	8221	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6222	- Վերավաճառքի համար ապրանքների իրացումից մուտքեր	8222	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6223	- Սպառման համար նախատեսված պաշարների իրացումից մուտքեր	8223	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6300	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6310)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0

	այդ թվում՝										
6310	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8311	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6400	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	x	-4,000,000.0	X	-4,000,000.0	-4,000,000.0	X	-4,000,000.0	-17,931,597.6	X	-17,931,597.6
	այդ թվում՝										
6410	ՀՈՂԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8411	-4,000,000.0	X	-4,000,000.0	-4,000,000.0	X	-4,000,000.0	-17,931,597.6	X	-17,931,597.6
6420	ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8412	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6430	ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8413	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6440	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8414	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
03.01.2021 31.12.2021 Ժամանակահատվածի համար

(հազար դրամ)										
Տողի NN		Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
		Ընդամենը (ս.4 + ս5)	այդ թվում		Ընդամենը (ս.7 + ս8)	այդ թվում		Ընդամենը (ս.10 + ս11)	այդ թվում	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
7000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	-8,356,476.8	0.0	-8,356,476.8	-23,835,086.9	-14,086.7	-23,821,000.2	1,376,367.6	5,482,919.0	-4,106,551.4

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03.01.31.12.2021

Ժամանակահատվածի համար

(հազար դրամ)

[illegible]

8142	ՀՀ պետական բյուջեից		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
8143	ՀՀ այլ համայնքների		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
8150	- սղացված փոխադրությունների որից՝	6112	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8151	ՀՀ պետական բյուջեին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
8152	ՀՀ այլ համայնքների բյուջեին		0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
8160	2.3.1. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող8161+տող8170+տող8191+տող8196+տող8201+տող8202 այդ թվում՝		7,398,143.5	0.0	7,398,143.5	22,876,753.6	14,086.7	22,862,666.9	-2,353,913.7	-5,482,919.0	3,129,005.3
8161	2.1. Բաժնատուներ և կապիտալում այլ մասնակցություն (տող 8162+տող 8163+տող 8164)		-541,856.5	X	-541,856.5	-756,656.5	X	-756,656.5	-1,255,518.6	X	-1,255,518.6
8162	որից՝ - համայնքային սեփականության բաժնեգրումների և կապիտալում համանուն - իրավ. անձ. կանոնադր. կապիտալում պետ. մասնակց, պետ. սեփակ. հանդիսացող անշարժ գույքի (բացառ. հողերի), այդ թվում՝	9213	0.0	X		0.0	X		0.0	X	
8163	- բաժնեգրումներ և կապիտալում այլ մասնակցության	9213	0.0	X	0.0	500,000.0	X	500,000.0	0.0	X	0.0
8164		6213	-541,856.5	X	-541,856.5	-1,256,656.5	X	-1,256,656.5	-1,255,518.6	X	-1,255,518.6
8170	2.2. Փոխառություններ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8171	որից՝ - նախադրում	9212	0.0	0.0		0.0	0.0		0.0	0.0	
8172	տրամադրված իրաւասութւններով	6212	0.0	0.0		0.0	0.0		0.0	0.0	
8190	- փոխադրությունների տրամադրված	6212	0.0	0.0		0.0	0.0		0.0	0.0	
8191	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8196+տող 8201+տող 8202 այդ թվում՝		7,940,000.0	0.0	7,940,000.0	23,633,410.1	14,086.7	23,619,323.4	23,633,410.1	14,086.7	23,619,323.4
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	###	2,113,000.0	2,113,000.0	X	6,859,593.8	6,859,593.8	X	6,859,593.8	6,859,593.8	X
8192	որից՝ - ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման		0.0	0.0	X	14,086.7	14,086.7	X	14,086.7	14,086.7	X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		2,113,000.0	2,113,000.0	X	6,845,507.1	6,845,507.1	X	6,845,507.1	6,845,507.1	X
8194	2.3.1.1 Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝	###	2,113,000.0	2,113,000.0	X	6,859,593.8	6,859,593.8	X	6,859,593.8	6,859,593.8	X

2.3.1.2. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի վարչական մասի մնացորդից	###	0.0		X	0.0		X	0.0		X
8196 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդից	###	7,940,000.0	0.0	7,940,000.0	23,619,323.4	0.0	23,619,323.4	23,619,323.4	0.0	23,619,323.4
8197 2.3.2.1. Համայնքի բյուջեի մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվարկված հաշվառման հիմունքներով		5,827,000.0	X	5,827,000.0	16,773,816.3	X	16,773,816.3	16,773,816.3	X	16,773,816.3
8198 Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվարկված համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից	###	5,827,000.0	X	5,827,000.0	16,773,816.3	X	16,773,816.3	16,773,816.3	X	16,773,816.3
8199 Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից	###	0.0	X		0.0	X		0.0	X	
8200 2.3.2.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից		2,113,000.0	X	2,113,000.0	6,845,507.1	X	6,845,507.1	6,845,507.1	X	6,845,507.1
8201 2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում		X	X	X	X	X	X	0.0	0.0	0.0
8202 2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական		0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	0.0	0.0
8203 2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8000- տող 8110 -		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	-24,731,805.2	-5,497,005.7	-19,234,799.5
8204 2.6.1. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	-6,859,593.8	-14,086.7	-6,845,507.1
8300 Բ. ԱՐՔՅՈՒՐՆԵՐ (տող 8310) այդ թվում՝		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8310 1. ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8311+տող 8320) այդ թվում՝		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8311 1.1. Արտաթղթային (բացառությամբ բաժնետոմսերի և արժեթղթերի)		0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
8312 - թողարկումից և տեղադրումից հետո	9121	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
8313 - հիմնական գումարի մատչելիություն	6121	0.0	X		0.0	X		0.0	X	

8320	1.2. Վարկեր և փոխառվածքներ (ստացում և մարում) (տող 8321+տող 8340) այդ թվում՝		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
8321	1.2.1. Վարկեր (տող 8322+տող 8330) որից՝		0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
8322	- վարկերի ստացում	912 2	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
8330	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում	612 2	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
8340	1.2.2. Փոխառվածքներ (տող 8341+տող 8350) որից՝		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8341	- փոխառվածքների ստացում	912 2	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
8350	- ստացված փոխառվածքների գումարի մարում	612 2	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 81,729,646.4 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 85,801,844.1 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 95.3%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 84,493,669.8 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 80,667,846.4 հազար դրամ՝ ապահովելով 95.5% կատարողական:

Երևան քաղաքի 2021 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 30,694,325.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 30,611,350.8 հազար դրամ կամ 99.7%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 6,082,399.0 հազար դրամով:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 80,353,278.8 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 73.3%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, պատվիրակված լիազորությունների մասամբ չիրականացմամբ:

Հարկ է նշել, որ 2021 թվականի բյուջեի ծրագրված (ճշտված) 23,835,086.9 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 1,376,367.6 հազար դրամ հավելուրդով:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 26.2%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 8.8%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 12.6%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.1%-ը՝ տեղական տուրքերից, 0.7%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 26.4%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից, 47.4%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.1%-ը՝ շահաբաժիններից, 1.5%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 36.2%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 7.9%-ը՝ վարչական գանձումներից, 0.9%-ը՝ տույժերից, տուգանքներից, 0.7%-ը՝ այլ եկամուտներից :

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների հավաքագրումը 2021 թվականին գերակատարվել է, մասնավորապես գույքային հարկեր անշարժ գույքից հավաքագրվել է 7,166,984.6 հազար դրամ՝ որը կազմել է ծրագրվածի 110.7%-ը, որը կազմում է հարկային եկամուտների 33.4%-ը, իսկ փոխադրամիջոցների համար գույքահարկը հավաքագրվել է ծրագրվածից 1,633,140.9 հազ. դրամով ավելի, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտների 48.0%-ը:

Տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը ևս գերակատարվել է՝ փաստացի կազմելով 3,378,808.0 հազ. դրամ ծրագրված 3,184,562.1 հազ. դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 106.1%: Տեղական տուրքերի կազմում 111.3% տեսակարար կշիռ է ապահովել արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար փաստացի հավաքագրված 1,582,883.2 հազար դրամ տուրքը, որը գերակատարվել է 160,383.2 հազ. դրամով: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 594,791.9 հազար դրամ ծրագրված 566,500.0 հազար դրամի դիմաց: Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ

հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար տուրքերը գերակատարվել են 63.1%-ով, համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար տուրքերը 55.2%-ով, համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տուրքերը 36.0%-ով:

Այսպիսով, հարկային եկամուտների և տուրքերի մասով 2021 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 21,424,178.6 հազար դրամ՝ ծրագրված 22,232,317.4 հազար դրամի նկատմամբ:

Այդ թվում՝

-Անշարժ գույքի հարկի և գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 17,450,475.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 18,590,755.3 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 93.9%,

-Տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,378,808.0 հազար դրամ՝ նախատեսված 3,184,562.1 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 106.1%,

-Պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 594,895.5 հազար դրամ՝ ծրագրված 457,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 130.2%, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 123,188.7 հազար դրամ 77,000.0-ի դիմաց,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 471,706.8 հազար դրամ՝ 380,000.0-ի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 21,533,936.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 23,809,914.8 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 90.4%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝

ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով 242,336.9 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով 714,727.9 հազար դրամ, իսկ ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 6,848,701.4 հազար դրամ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 297,814.7 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 39,759,611.9 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 38,771,531.9 հազար դրամ, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 102,471.2 հազար դրամ՝ կանխատեսված 121,366.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.4%,

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1,261,162.0 հազար դրամ, ծրագրված 1,139,193.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 110.7%,

-պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 29,584,359.7 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 31.297.603.5 հազար դրամի դիմաց կամ 94.5%-ը,

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 32,914.7 հազար դրամ,

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 5,603,656.5 հազար դրամ, նախատեսված 5,726,829.3 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 97.8%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է աղբահանության վճարների, ինչպես նաև ավտոկայանատեղի վճարների գծով կանխատեսված և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 836,091.7 հազար դրամ, որն ավել է 636,091.7 հազար դրամով ծրագրված 200,000.0 հազար դրամից,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 746,459.2 հազար դրամ, նախատեսված 495,100.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 150.8%-ը,

-համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց կազմել են 2,288.6 հազ. դրամ,

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 46,157.4 հազար դրամ,

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 540,205.5 հազար դրամ՝ նախատեսված 747,520.0 հազար դրամի դիմաց:

Ծախսեր

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 80,353,278.8 հազար դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 109,636,931.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 73.3%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 98,3%: Ընդամենը փաստացի ծախսերից 75,184,927.4 հազար դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 23,639,126.9 հազար դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 18,470,775.5 հազար դրամ:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 40.8%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 33.7%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 12.9 %:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	10,122,417.9	9,895,711.4	97.8%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	9,030,731.0	7,568,983.3	83.8%
Տոկոսավճարներ	4,100.0	3,217.4	78.5%
Սուբսիդիաներ	43,148,783.9	42,296,850.4	98.0%
Դրամաշնորհներ	546,427.9	525,352.9	96.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,108,592.8	1,075,074.4	96.9%
Այլ ծախսեր	20,563,111.7	13,733,750.8	66.8%
Հիմնական միջոցներ	29,645,365.8	23,531,582.4	79.4%

Պաշարներ	8,400.0	0.0	0.0%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-541,000.0	-539,178.0	99.7%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-4,000,000.0	-17,931,597.6	448.3%
Ընդամենը	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10,048,427.8	9,033,044.3	89.9%
Պաշտպանություն	82,960.0	42,402.1	51.1%
Տնտեսական հարաբերություններ	31,074,415.5	11,777,662.8	37.9%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	13,468,228.8	10,393,020.0	77.2%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	7,196,974.7	4,838,062.4	67.2%
Առողջապահություն	483,840.0	317,800.7	65.7%
Հանգիստ, մշակույթ և կրոն	4,330,327.3	3,567,354.6	82.4%
Կրթություն	32,917,313.1	31,525,878.8	95.8%
Սոցիալական պաշտպանություն	1,658,374.7	1,225,988.8	73.9%
Պահուստային ֆոնդեր	8,376,069.1	7,632,064.2	91.1%
Ընդամենը	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման

հողվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է ծրագրերի գծով առկա տնտեսումներով:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

Խ/Խ	Վարչական շրջանի անվանումը	2021թվականի բյուջեով նախատեսվածը	2021թվականի փաստացի ծախսը	Կատարման %-ը 2021 թ. նախատեսվածի նկատմամբ
1	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	83,471,017.9	57,446,187.9	68.8%
2	Աջափնյակ	2,768,656.3	2,492,563.8	90.0%
3	Ավան	1,347,500.0	1,181,979.8	87.7%
4	Արաբկիր	2,632,102.5	2,381,892.5	90.5%
5	Դավթաշեն	1,410,031.3	1,155,051.7	81.9%
6	Էրեբունի	2,243,102.3	1,895,858.7	84.5%
7	Կենտրոն	2,990,472.0	2,596,892.6	86.8%
8	Մալաթիա-Սեբաստիա	3,045,610.6	2,716,208.9	89.2%
9	Նոր Նորք	3,069,528.3	2,734,481.2	89.1%
10	Նորք-Մարաշ	623,021.0	513,542.8	82.4%
11	Նուբարաշեն	585,266.0	490,341.5	83.8%
12	Շենգավիթ	3,371,071.9	2,933,466.0	87.0%
13	Քանաքեռ-Զեյթուն	2,079,550.9	1,814,911.4	87.3%
	ԸՆԴԱՄԵՆԸ	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով 2021 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 9,348,834.6 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 8,694,361.2 հազար դրամ կամ նախատեսվածի 93.0%-ը, որը ավել է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 1,266,755.2 հազար դրամով: Ծրագրի գծով 2021 թվականի խնայողությունը կազմել է 654,473.4 հազար դրամ, որից միայն աշխատավարձի և պարգևատրման գծով ծախսերի տնտեսումը կազմել է 186,237.3 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով ծախսերը կազմում են՝ 6,287,470.8 հազար դրամ՝ նախատեսված 6,397,429.0 հազար դրամի դիմաց կամ 98.3%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 10-Ա և 2021 թվականի հուլիսի 29-ի N 422-Ա որոշումներով սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 2,008.5 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1,865 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 915,024.9 հազար դրամ՝ նախատեսված 991,304.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.3%, որը ավել է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 153,167.4 հազար դրամով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 202,816.3 հազար դրամ՝ նախատեսված 266,117.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 76.2%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 13,445.7 հազար դրամ նախատեսված 19,306.9 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 161,607.1 հազար դրամ՝ նախատեսված 192491.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 83.9%, որը պակաս է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 11,828.4 հազար դրամով, և ներառում են փոստային, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները:

Ապահովագրական ծախսերը կազմել են 35,583.4 հազար դրամ՝ նախատեսված 48,531.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 73.3%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 37,375.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 85.1%, որը պակաս է 2020 թվականի փաստացի ցուցանիշից 70.1 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում տարեսկզբից ապահովվել է քաղաքապետարանի թվով 10 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը և այլն:

Ներքին գործուղումների գծով ծախսը կազմել է 343.5 հազար դրամ՝ ճշտված 1,009.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 34.0 %:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 10,957.8 հազար դրամ՝ նախատեսված 27,792.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 39.4 %, կամ խնայողությունը կազմել է 16,834.2 հազար դրամ: Գործուղումներ են կազմակերպվել դեպի Բրյուսել, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նովոսիբիրսկ, Դոնի Ռոստով, Սոչի, Կիև, Օդեսա և բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 3,977.8 հազար դրամ՝ նախատեսված 11,770.0 հազար

դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 33.8%, որն պակաս է 2020 թվականի փաստացի ցուցանիշից 2,170.1 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 44,014.0 հազար դրամ՝ նախատեսված 45,113.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 97.6%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 1,446.3 հազար դրամ՝ նախատեսված 7,362.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 19.6%-ով: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 129 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 16,019.3 հազար դրամ՝ նախատեսված 22,593.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 70.9%-ով, ինչը ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 4,738.9 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 5,782.2 հազար դրամ՝ նախատեսված 5,900.0 հազար դրամի դիմաց կամ 98%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2020 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 21,905.5 հազար դրամ՝ նախատեսված 40,727.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է շուրջ 53.8%-ով, ինչի շրջանակներում ապահովվել է Երևան

ժամանաձ պատվիրակությունների ընդունելությունը, հյուրասիրությունը, հուշանվերների ձեռք բերումը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի երդմնակալության արարողության պաշտոնական պատվիրակության ընդունելության ծախսերը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը՝ 39,831.8 հազար դրամ, որից 3,198.0 հազար դրամը սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայությունները և 36,633.8 հազար դրամը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի հասարակական կարգի պահպանման ծառայությանը: Ծրագրի գծով նախատեսված ցուցանիշը կատարվել է 86.9%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 11,453.2 հազար դրամ՝ նախատեսված 18,658.5 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 61.4%-ով, ինչը 3,164.5 հազար դրամով ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, Երևանի քաղաքապետարանին սեփականության իրավունքով պատկանող լրիվ մաշված, դուրս գրման ենթակա հիմնական միջոցների, գույքի գնահատման, տրանսպորտային միջոցների գնահատելու, վերագնահատելու և օտարելու գործընթացի կազմակերպման ծառայությունը, գազասպառման համակարգի սպասարկման, ինչպես նաև հնոցապանի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 200,104.4 հազար դրամ՝ նախատեսված 216,760.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.3%: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 49,405.8 հազար դրամի ծախս՝ նախատեսված 77,566.7 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 63.7%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի

նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 140,458.6 հազար դրամ՝ նախատեսված 146,277.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 96.0%, կամ 4,981.3 հազար դրամով ավելի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 16,010.5 հազար դրամ՝ նախատեսված 26,311.4 հազար դրամի դիմաց, ինչը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, մեկանգամյա օգտագործման բաժակներ, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 27,499.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 66,174.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 41.6% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման և COVID-19 համաճարակով պայմանավորված ախտահանիչ նյութերի, դիմակների ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 252,540.0 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 252,540.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ քյուլչեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 40,528.0 հազար դրամ՝ նախատեսված 53,270.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին»

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի N 28-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 26-ի 454-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հոդվածով ծախսը կազմել է 10,783,3 հազար դրամ նախատեսված 11,763.6 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին երկու ուղղություններով կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 12,160.3 հազար դրամ՝ նախատեսված 13,822.6 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռք բերված թվով 211 հատ CK6860HGN <<ZHONGTONG>> մակնիշի ավտոբուսների համար հաշվառման, գրանցման ծախսերը:

Այլ ծախսեր հոդվածով նախատեսված 26,735.1 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 82,205.1 հազար դրամ՝ նախատեսված 131,602.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 62.5%, ինչը 4,971.4 հազար դրամով պակաս է 2020 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով նախատեսված 86,640.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2,770.5 հազար դրամ, որը ուղղվել է աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 50,841.0 հազար դրամ՝ նախատեսված 53,500.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է կիբեռ անվտանգության համակարգի ձեռքբերում, Երևան քաղաքի բյուջեի մշակման համակարգչային ծրագրի արդիականացում, լրամշակում և ՀԾ-Ձեռնարկություն

համակարգ 9 աշխատատեղի համար ծառայությունների ձեռք բերում, ինչպես նաև հակավիրուսային համակարգի ծրագրային փաթեթների ձեռքբերում:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 72,225.1 հազար դրամ՝ նախատեսված 113,853.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 63.4%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքապետարանի ջեռուցման համակարգի հիմնանորոգման, Կենտրոն վարչական շրջանի նախասրահի, Աջափնյակ, Ավան, Էրեբունի, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց ծախսը կազմում է 9,709.6 հազար դրամ՝ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց: Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը Երևան քաղաքին շնորհվել է երկարաժամկետ «B+» վարկանիշը՝ «Կայուն» կանխատեսմամբ:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 79,585.2 հազար դրամ՝ նախատեսված 96,749.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 82.3%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

5. Նախագծային աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 95,408.3 հազար դրամ՝ նախատեսված 230,217.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2020 թվականի փաստացի ցուցանիշից 20,302.0 հազար դրամով պակաս: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

6. Գլխավոր հատակագծի ճշգրտում և Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,000.0 հազար դրամ հաստատված 140,000.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 7.1%, որի շրջանակներում իրականացվել է Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական աշխատանքներ:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 71,754.9 հազար դրամ՝ նախատեսված 104,772.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 68.5%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 28,992.1 հազար դրամ՝ նախատեսված 69,900.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 41.5%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային զինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին: 18,327.8 հազար դրամ գումարով իրականացվել է Երևան քաղաքում թվով 10 նոր հիդրանտների կառուցման, ինչպես նաև գոյություն ունեցող թվով 38 հիդրանտների նորոգման աշխատանքներ:

9. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,410.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 13,410.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%: Ծրագրով իրականացվել է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին կատարվող վճարումները:

10. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն ծրագրով նախատեսված 13,200.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6,018.7 հազար դրամ՝ 45.6%:

11. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,385.5 հազար դրամ՝ նախատեսված 44,176.0 հազար դրամի դիմաց և իրականացվել են

2020թվականին սկսված Ա.Միկոյանի փողոցի Դոմուս առևտրի կենտրոնի հարակից տարածքում խորքային հորի կառուցման աշխատանքներ:

12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում ծրագրերով իրականացվել է 1,699,847.2 հազար դրամի ծախս նախատեսված 2,112,766.7 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել և իրականացվել Երևանի թվով 14 մանկապարտեզներում:

13. Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար դրամաշնորհային ծրագիր և Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար ծրագրի համաֆինանսավորում ծրագրերով կատարված ծախսը կազմում է 125,843.3 հազար դրամ նախատեսված 649,354.4 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 19.4%: Ծրագրի շրջանակներում շուրջ 49 շենքերում իրականացվել են շենքերի ներքին և արտաքին տարածքների լուսավորման համակարգերի տեղադրման աշխատանքներ, թվով 55 բազմաբնակարան շենքերում ծրագրի իրականացման ուղղությամբ իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, թվով 49 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, ինչպես նաև 55 անապահով ընտանիքներին տրամադրվել են շուրջ 580 տնտեսող լամպեր:

14. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,548,268.7 հազար դրամ՝ նախատեսված 3,571,893.8 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.3%, ինչը պակաս է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 131,744.3 հազար դրամով, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայրերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 851,2 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգման և ճաքալցման աշխատանքներ և թվով 221 դիտահորերի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների 402.2 գծմ ճաքալցման աշխատանքներ:

15. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 98,300.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը պակաս է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 22,068.9 հազար դրամով: Իրականացվել է 13476.3քմ փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

16. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 204,461.2 հազար դրամ՝ նախատեսված 239,537.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.4%, որով բոլոր վարչական շրջաններում շուրջ 20,595.0 գծմ եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար:

17. Հենապատերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 91,983.0 հազար դրամ՝ նախատեսված 184,185.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 49.9%, ինչը ավել է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 45,646.0 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր՝ թվով 27 հասցեներում:

18. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,055.9 հազար դրամ՝ նախատեսված 74,434.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են «Բարեկամություն» մետրոյի կայարանի ստորգետնյա հետիոտնային անցման երկու մուտքերի աստիճանների վերանորոգման աշխատանքներ:

19. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 153,061.0 հազար դրամ՝ նախատեսված 173,700.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 41 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղեծրերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները, իսկ 63,561.0 հազար դրամով Զովունի-Թբիլիսյան խճուղու «Կորեայի ձոր»-ում Հրազդան գետի վրա իրականացվել են հին կամրջի հիմնանորոգման և նորի կառուցման աշխատանքներ:

20. Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,841.3 հազար դրամ՝ նախատեսված 9,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման, բարեկարգման և Երևանյան լճի մաքրման աշխատանքներ:

21. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 613,013.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 884,833.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 69.3%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի փողոցների ճանապարհի նոր մայրերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայրերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ (մասնավորապես, Հալաբյան փողոցի վերջնամասի մայրի, Նազարբեկյան թաղամասի ծառուղու, Գյուլիբեկյան Վաղարշյան հատվածի մայրի, թիվ 145 դպրոցի տարածքի նոր մայրի կառուցում, Բաղրամյան փակուղու մայրի վերանորոգում, Դուրյան 45, Աճառյան 26, Ավան-Առինջ 1 թաղ. 2/11, Ալմա Աթա փողոցի մայր, Խուդյակով փողոցի մայր, Աթենքի փողոցի, Կողբացի փողոցի մայրերի հիմնանորոգում):

22. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 220,306.4 հազար դրամ՝ նախատեսված 237,991.3 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են «Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարանի քարե շինության հիմնանորոգում, շուրջ 486 դիտահորերի կափարիչների ուղղում, ինչպես նաև Մյասնիկյան, Սարալանջ փողոցների քարաթափումներից կանխարգելիչ ցանցապատում:

23. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմում է 412,078.5 հազար դրամ նախատեսված (ճշտված) 412,761.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8 %: Ծրագրի շրջանակներում 52,761.7 հազար դրամ գումար տրամադրվել է Երևանտրանս ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ Փարքինգ Սիթի սերվիս ՓԲԸ-ին:

24. Թերահարթակների կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,911.7 հազար դրամ՝ նախատեսված 23,732.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը

կազմել է 20.7%, որի շրջանակներում Երևան քաղաքի Աջափնյակ, Արաբկիր, Շենգավիթ վարչական շրջանների փողոցների խաչմերուկների մայթերի և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են նոր թեքահարթակներ:

25. Տրանսպորտային համակարգի արդիականացում ծրագրով նախատեսված 16,696,659.6 հազար դրամի դիմաց կատարվել է 14,379,996.4 հազար դրամի ծախս: Նշված գոյմարի շրջանակներում 10,776,601.5 հազար դրամով կատարվել են վճարումներ 2020 թվականին ձեռքբերված թվով 74 ավտոբուսների, ինչպես նաև 2021 թվականին ձեռք բերված թվով 211 ավտոբուսների դիմաց, 16,632.0 հազար դրամով նշված ավտոբուսների համար ձեռք է բերվել ծրագրային համակարգ, իսկ 3,586,762.9 հազար դրամով իրականացվել են ավտոբուսների մաքսազերծման վճարները, ԱԱՀ-ն:

26. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 107,193.5 հազար դրամ՝ նախատեսված 446,232.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 24.0%, որից 4,820.0 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել նստարաններ և աղբամաններ, 20,440.3 հազար դրամով թվով 14 հետիոտնային լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքներ, 47,696.6 հազար դրամով ձեռք է բերվել թուջե արգելապատնեշներ, 21,500.5 հազար դրամով ձեռքբերվել և տեղադրվել են մետաղական ճաղավանդակներ, 11,380.0 հազար դրամով իրականացվել են նստարանների ամբողջական և մասնակի վերանորոգման աշխատանքներ, 21,497.0 հազար դրամով՝ հետիոտնային կանչի լուսացույցի համար վահանակով և ուղղագիծ սյուներով ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ:

27. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 654,120.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 656,899.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողություն,

Իսակով-Արշակունյաց պողոտաները իրար միացնող ճանապարհահատվածի նախագծային աշխատանքներ, ծրագրի ֆինանսական աուդիտ, SS սպասարկում:

28. Կայանատեղիների կառուցում և վերակառուցում ծրագրով իրականացվել է 31,796.0 հազար դրամի ծախս՝ Երևանտրանս ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղիի նոր մուտքի և պահակակետի կառուցման նպատակով, նախատեսված 49,200.0 հազար դրամի դիմաց:

29. Վերելակների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,748,137.0 հազար դրամ՝ նախատեսված 3,251,411.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 84.5%, որի շրջանակներում 512,946.0 հազար դրամով ձեռք է բերվել 54 նոր վերելակ, 2,140,204.7 հազար դրամ վճարվել է 2020 թվականին ձեռք բերված և չվճարված, ինչպես նաև շուրջ 60 նոր տեղադրված վերելակների դիմաց, իսկ 94,986.3 հազար դրամով թվով 8 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

30. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,855,275.9 հազար դրամ՝ նախատեսված 2,862,392.6 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

31. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,315.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

32. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) իրականացվել է 315,965.6 հազար դրամի ծախս:

33. Զբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսված 23,100.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 14,830.0 հազար դրամի ծախս՝ Երևան քաղաքի թեմատիկ քարտեզի մշակման, ձևավորման և անհրաժեշտ տպագրական աշխատանքների իրականացման նպատակով, Երևան քաղաքի պաշտոնական զբոսաշրջային կայքի և հավելվածի ստեղծման, մշակման և պահպանման, ինչպես նաև ռուսերեն լեզվով ուղեցույցի կազմման և տպագրության նպատակով:

34. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,075.5 հազար դրամ՝ նախատեսված 45,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 51.3%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են ՀՀ դրոշների փոխման, հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

35. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 168,100.0 հազար դրամ՝ նախատեսված 168,100.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

36. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 402,809.8 հազար դրամ՝ նախատեսված 410,245.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.2%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ թվով 60 կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն), մասնավորապես՝ 61,550.0 հազար դրամն ուղղվել է Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի կողմից տրանսպորտային միջոցների ախտահանման աշխատանքների փոխհատուցմանը, 20,000.0 հազար դրամը Ապրելու Արցախի հիմնադրամ ԲԿ-ին՝ 100տոն Արցախում ծրագրին աջակցելու նպատակով, 7,317.9 հազար դրամը գրադարանային ֆոնդի համալրման գործընթացի կազմակերպման աշխատանքներին

աջակցելուն, 22,000.0 հազար դրամը Երևան օֆեն-21 շախմատի միջազգային մրցաշարը կազմակերպելու նպատակով, 61,094.2 հազար դրամը Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն ՓԲԸ-ի ազատված աշխատակիցների վերջնահաշվարկի գումարների փոխհատուցման համար, 50,000.0 հազար դրամը Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ ՓԲԸ-ի նոր անգիոգրաֆիկ սարքի ձեռքբերմանն աջակցության նպատակով, 30,000.0 հազար դրամը՝ Քաղաքաշինություն ՓԲԸ-ի կարիքների համար գեոդեզիական գործիքային համակարգի ձեռք բերմանն աջակցության, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել Թափոնային արվեստ ծրագրի շրջանակներում 4 թափոնային քանդակի ստեղծման և տեղադրման աշխատանքներին, ռոբոտաշինության միջազգային մրցույթի կազմակերպմանը, Արտավազդ մրցանակաբաշխությունը կազմակերպելու նպատակով, Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի օդափոխության համակարգի աշխատանքների աջակցելու նպատակով, Ազատության հրապարակում կազմակերպվող Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված համերգին աջակցելու նպատակով, և այլն...

37. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 18,470,775.5 հազար դրամ նախատեսված 4,541,000.00 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 406.8%:

38. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ ծրագրով կատարվել է 35,743.0 հազար դրամի ծախս նախատեսված 44,370.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 80.6%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է <<Քաղաքաշինություն>> ՓԲԸ-ին հատակագծի կազմման աշխատանքների համար:

39. Ներդրումային ծրագրերի իրականացման ծրագրով փաստացի ծախսը կազմել է 114,120.0 հազար դրամ՝ նախատեսված 133,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.8%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

40. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,588.7 հազար դրամ՝ նախատեսված 14,102.7 հազար դրամի դիմաց, որից 4,692.2 հազար դրամը հատկացվել է թվով 3 վարչական շրջանների համատիրություններին

վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց, իսկ 5,896.4 հազար դրամը՝ աղբահանության վճարի անդորրագրերի տպագրական աշխատանքների ձեռքբերմանը:

41. Տոնավաճառների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 79.5 հազար դրամ ծրագրված 984.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են գյուղատնտեսական տոնավաճառի տաղավարների արդիականացման աշխատանքներ:

42. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում ծրագրով ծախսը կազմել է 538,915.0 հազար դրամ 650,205.0 հազար դրամի դիմաց որն ուղղվել է Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև 175,740.0 հազար դրամ գումարը ուղղվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախից ՀՀ ժամանած քաղաքացիներին Արցախ տեղափոխելու տրանսպորտային փոխադրումներին:

43. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 827,391.9 հազար դրամ՝ նախատեսված 889,884.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.0%, որի շրջանակներում 11,977.8 հազար դրամով ձեռք է բերվել ձեռնոց, պարկ, դույլ, բահ, փոցխ, 227,102.1 հազար դրամով ձեռք է բերվել կենցաղային թափոնների կոնտեյներներ, 31,143.4 հազար դրամն ուղղվել է փողոցներում և բակային հատվածներում կենցաղային աղբի համար նախատեսված հարթակների կառուցման աշխատանքներին, 35,034.0 հազար դրամով ձեռք են բերվել թվով 4 հատ պիկապ ավտոմեքենաներ, 492,000.0 հազար դրամով՝ թվով 8 բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային ինքնաթափ բեռնատար մեքենաներ:

44. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 338,452.7 հազար դրամ՝ նախատեսված 373,136.5 հազ. դրամի դիմաց:

45. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրոշմանիշային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 4,711.8 հազար դրամ նախատեսված 55,910.4 հազար դրամի դիմաց:

46. <<Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր ծրագրով նախատեսված 4,554,982.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4,474,420.9 հազար դրամ, կամ 98.2%, որն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության աշխատանքներին:

47. <<Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր>> ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում ծրագրով իրականացվել է 10,000.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 10,000.0 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

48. Զրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 409,396.3 հազար դրամ՝ նախատեսված 631,065.0 հազար դրամի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.9%, որի շրջանակներում իրականացվել են Շենգավիթ վարչական շրջան Չարբախի կոյուղագիծը, Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամասի 7շենքից դեպի 4բ շենքի և 1-ին թաղամաս 10ա շենքից մինչև Տիգրան Պետրոսյան փողոցի, Արշակունյաց 39/9 հասցեի, Էջմիածնի խճ./Նորագյուղի կենտրոնի ձախակողմյան հատվածի, Նուբարաշեն վարչական շրջանի Դ թաղամասի 11-րդ փողոցի, Աջափնյակ վարչական շրջանի Էստոնական փողոցի 6շենքի, Շենգավիթ վ/շ Նորագավիթ 13, 14 փողոցի կոյուղագծերը, ինչպես նաև Կիլիկիա թաղամասի 3,4 շենքերի և Փիրումյան թաղ. բնակելի տների արտաքին ջրահեռացման և Նանսենի 17շենքի, Լվովյան 25շենքի և Սամվել Գևորգյան փողոցի ջրահեռացման և խմելու ջրի համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ:

49. Գետերի հունների մաքրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով:

50. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսված 3,683,205.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3,676,416.7 հազար դրամ, որից 3,663,327.8 հազար դրամը որպես սուբսիդիա տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, ինչպես նաև Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերի համար «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ին հատկացվել է 13,088.9 հազար դրամ:

51. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,106.5 հազար դրամ՝ նախատեսված 27,907.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 82.8%, որի շրջանակներում վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակրան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

52. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,750.0 հազար դրամ՝ նախատեսված 14,320.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 47.1%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

53. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 252,853.3 հազար դրամ՝ նախատեսված 252,853.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որի շրջանակներում վնասազերծվել է 3,816 կենդանի, որից ստերջացվել է 2794, քնեցվել 642 և որդեգրվել 215 և վերավակցինացվել է 329 կենդանի:

54. Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ՝ աշխատանքների իրականացում և Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ դրամաշնորհային ծրագիր ծրագրերով ծախսը կազմում է 324,836.9 հազար դրամ՝ նախատեսված 2,526,347.8 հազար դրամի դիմաց, նշված ծրագրի Երևան համայնքի կողմից համաֆինանսավորումը կազմել է 82,500.0 հազար դրամ՝ նախատեսված 280,433.8 հազար դրամի դիմաց:

55. Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմում է 6,000.0 հազար դրամ՝ նախատեսված 409,931.6 հազար դրամի դիմաց, և սկսվել են Թեյշիբաինի 8/8 հասցեում կենդանիների վնասազերծման կենտրոնի ադմինիստրատիվ շենքի կառուցման աշխատանքները:

56. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,500.0 հազար դրամ՝ նախատեսված 10,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 35.0%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

57. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,564.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,564.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%, որն ուղղվել է վերաբնակեցված բնակիչների համար բնակարանների վարձակալության համար:

58. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով նախատեսվել է 500,000.0 հազար դրամ: Ծրագիրը սկզբնական փուլում է, իրականացվում են նախագծային աշխատանքներ, ծախսը կկատարվի 2022 թվականին:

59. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 14,958.0 հազար դրամ՝ նախատեսված 23,495.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 63.7%, որն ուղղվել է Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի փողոցի 19 և 23 շենքերի LED տեսակի լուսավորության կառուցմանը, ինչպես նաև առկա ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

60. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,911,514.9 հազար դրամ՝ նախատեսված 2,025,735.8 հազար դրամ գումարի դիմաց, որից 729,951.6 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի պահպանման ծախսերին (աշխատավարձ, էլեկտրաէներգիա և ընթացիկ նորոգման աշխատանքներ):

61. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» դրամաշնորհային

ծրագիր (պատվիրակված լիազորություններ), «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» (պատվիրակված լիազորություններ), և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 61,115.5 հազար դրամ նախատեսված 674,362.6 հազար դրամի դիմաց:

62. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,665.2 հազար դրամ՝ նախատեսված 12,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 63.9%, որն ուղղվել է թվով 29 վթարային շենքերի սեյսմիկ հետազոտման և ինքնական կառույցների օրինականացման ընթացքում շինությունների հետազոտման աշխատանքներին և սողանքի առաջացման ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններին:

63. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 713,828.3 հազար դրամ՝ նախատեսված 1,075,430,0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 66.4%, որի սահմաններում մայրաքաղաքի վարչական շրջաններում (բացառությամբ Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջանների) մասնակի կամ ամբողջական վերանորոգվել են 296 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներ, ինչպես նաև 7 վարչական շրջաններում հիմնանորոգվել են Կիևյան 2ա, Բաբայան 36, Քոչարի 22, Արղության 4, Սարկավազի 127, Գյուլիքեխվյան 11, Մուլդովական 32, Աճառյան 24, Ռուբինյանց 27/4Ա, Պուշկինի 72, Նալբանդյան 50, Սպենդիարյան 4,6, Դեմիրճյան 17, Լեոյի 12, Ավանեսովի 3, Էրեբունի փ. 5, Նուբարաշենի խճուղի 5/4, Նոր Արեշ 16փ. 9, Հալաբյան 47/3, Ֆուչիկի 2 նրբ. 3, 3/3, Լուկաշինի 1, Հալաբյան 47/3, Սիսակյան 10, Հասրաթյան 6/4, Ռայնիսի 1 շենքերի թվով 27 թեք տանիքներ, ինչպես նաև 128,342.0 հազար դրամով գնվել է տանիքների նորոգման համար շին. նյութ:

64. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 1,044,929.5 հազար դրամ՝ նախատեսված 1,631,059.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 64.1%, որից

105,985.3 հազար դրամի շրջանակներում համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում իրականացվել են բակային տարածքների պահպանման ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև 169,031.1 հազար դրամը ուղղվել է բակերի ընթացիկ նորոգմանը, 647,347.6 հազար դրամը բակային տարածքներում խաղահրապարակների և միջբակային աստիճանների կառուցմանը և հիմնանորոգմանը, 121,537.1 հազար դրամով ձեռք բերվել և մանկական խաղահրապարակներում և բակային տարածքներում տեղադրվել են ռետինե հատակներ, արհեստական խոտածածկեր, ճոճանակներ, սահարաններ, նստարաններ և զրուցարաններ: Ընդհանուր նորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի շուրջ 64 բակերում:

65. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 731,566.4 հազար դրամ՝ նախատեսված 839,763.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 87.1%, որի շրջանակներում 676,186.7 հազար դրամով վերանորոգվել կամ մասնակի նորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով 530 շքամուտքեր, ինչպես նաև շուրջ 81 մուտքերում տեղադրվել են դռներ, 90 մուտքերում փոխվել են լուսամուտները: Աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով մուտքերի նորոգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրություն-վարչական շրջան համագործակցության շրջանակներում ուղղակի պատվերի կամ 9,790.1 հազար դրամի սահմաններում անհրաժեշտ նյութերով ապահովելու եղանակով՝ 29,893.2 հազար դրամ գումարի շրջանակներում: 9,047.0 հազար դրամով իրականացվել է Ռայնիսի փողոցի հ. 1 շենքի փլուզված 5-րդ մուտքի վթարավտանգ պատի ամրացման աշխատանքներ, 6,649.2 հազար դրամով իրականացվել է Նուբարաշեն 11-րդ փողոցի հ.19 շենքի ամրացման աշխատանքներ:

66. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 308,000.0 հազար դրամ՝ նախատեսված 308,000.0 հազար դրամ գումարի դիմաց, որն ուղղվել է թվով 33 ջրային կառույցների պահպանմանը:

67. Կաթսայատների պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 15,409.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, որն ամբողջությամբ ուղղվել է Երևանի սեփականություն հանդիսացող կաթսայատների պահպանմանը:

68. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 22,011.4 հազար դրամ՝ նախատեսված 78,155.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 28.2%, որի սահմաններում հիմնանորոգվել են Արաբկիր, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների շենքերի շուրջ 68 վթարային պատշգամբ:

69. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 133,281.1 հազար դրամ՝ նախատեսված 222,340.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 59.9%: Ծրագրի սահմաններում ձեռք է բերվել և տրամադրվել Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններին 7 անուն թվով 33 բժշկական սարքավորում՝ ուլտրաձայնային ստացիոնար և դյուրակիր հետազոտման սարքեր, ռենտգեն ապարատներ, բինոկուլյար մանրադիտակներ, կոագուլոմետրեր և ճեղքային լամպեր:

70. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 176,815.2 հազար դրամ՝ նախատեսված 250,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.7%, որի շրջանակներում կատարվել են Արշակունյաց, Նոր Արեշ, Նորագավիթ, Նուբարաշեն, թիվ 12, թիվ 15, թիվ 16 և թիվ 20 թվով 8 պոլիկլինիկաների հիմնանորոգման աշխատանքներ:

71. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,704.4 հազար դրամ՝ նախատեսված 11,500.0 հազար դրամի դիմաց, որի սահմաններում թվով 150 սոցիալապես անապահով բնակիչներ անվճար անցել են կոմպյուտերային տոմոգրաֆիայի և 84 բնակիչներ՝ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն և 200 բնակիչ՝ կրծքագեղձի սքրինինգային հետազոտություն:

72. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 84,367.9 հազար դրամ՝ նախատեսված 119,140.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 70.8%, որի շրջանակներում Երևան քաղաքում 2021 թվականին իրականացվել են մի շարք սպորտային միջոցառումներ:

73. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 567,065.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 912,084.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 62.2%, որից 25,842.0

հազար դրամը ուղղվել է Սիրահարների զբոսայգու պահպանմանը, 32,832.5 հազար դրամը Հաղթանակ զբոսայգու Անմար կրակի գազամատակարարման, Երևանի 2800-ամյակի այգու ջրամատակարարման ծառայությանը: Ծրագրի շրջանակներում բարեկարգվել և կառուցվել են Կոմիտաս-Փափագյան խաչմերուկի պուրակը, Գյուլիքեխվյան 19, 21 շենքերի հանգստի գոտին, Նուբարաշենի 11 փողոցի հարակից հանգստի գոտին, Արագած փողոցի անտառային գոտու զբոսայգին, վերանորոգվել է Աբովյան փողոցի հ.21 շենքի բակը, հիմնանորոգվել է Հանրապետության հրապարակի ջրավազանի շրջակա տարածքը, բարեկարգվել 16-րդ թաղամասի 1-ին շրջայի այգին, Նոր Արաբկիր զբոսայգին, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում կառուցվել է թղթի և թունավոր նյութերից պատրաստված թափոնների համար թափոնատեղի: Կատարվել է Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի լուսավորության կարգավորում: 13,483.0 հազար դրամի շրջանակներում կատարվել են այգիներում ռետինե հատակների տեղադրում, նստարանների, աղբամանների նորոգում և նորի տեղադրում:

74. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 49,400.0 հազար դրամ՝ նախատեսված 50,000.0 հազար դրամի դիմաց:

75. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 99,499.5 հազար դրամ նախատեսված 118,604.8 հազար դրամի դիմաց, կառուցվել է Հաղթանակ թաղամասի մարզական համալիրը, 28,927.4 հազար դրամով Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել է Կոմիտասի անվան այգում խաղահրապարակի ստեղծում, սպորտային մարզասարքերի տեղադրում, 42,792.9 հազար դրամով Նոր Խարբերդ թաղամասում կառուցվել է մանկական մարզական այգի:

76. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 601,004.6 հազար դրամ գումար, որից 593,326.5 հազար դրամն ուղղվել է Երևանի համայնքային թվով 19 գրադարանային կազմակերպությունների սուբսիդավորմանը:

77. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 306,264.2 հազար դրամ՝ նախատեսված 322,102.6 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 4 թանգարանների պահպանման համար 295,649.8 հազար դրամ, իսկ 10,921.2 հազար դրամը

հատկացվել է Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեից «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար:

78. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 473,392.6 հազար դրամ՝ նախատեսված 476,127.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.4%՝ թվով 13 մշակույթի կենտրոնների պահպանման համար:

79. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 272,951.1 հազար դրամ՝ նախատեսված 450,442.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 60,6%, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների կողմից կազմակերպված մշակութային միջոցառումները, որոնցից հիմնականներն են Հայոց բանակի օր, Կանանց տոն, Թատրոնի համաշխարհային օրվան նվիրված «Արտավազդ» փառատոն , Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառման տեխնիկական սպասարկում:

80. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 334,365.3 հազար դրամ, որից 313,056.7 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

81. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 149,474.3 հազար դրամ՝ 150,592.6 հազար դրամի դիմաց՝ որն ուղղվել է թվով 5 կազմակերպությունների պահպանմանը:

82. Թատերական ներկայացումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 542,899.6 հազար դրամ՝ նախատեսված 542,899.6 հազար դրամի դիմաց և հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա՝ թվով 3 թատրոնների պահպանման համար:

83. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,890.0 հազար դրամ՝ նախատեսված 108,410.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 3.6%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման աշխատանքները, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա

հուշարձանների ցանկում: Նախատեսված գումարից 96,410.0 հազար դրամ գումարը հատկացվել է ՀՀ 2021թվականի պետական բյուջեից 28.10.2021թ. թիվ 1779-Ն որոշումով որպես կապիտալ սուբվենցիա, ծախսը կիրականացվի 2022 թվականին:

84. ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում ծրագրով նախատեսված 60,014.0 հազար դրամ գումարի դիմաց ծախս կատարվել է 22,454.5 հազար դրամի ծախս: Նշված գումարից 18,002.4 հազար դրամը տրամադրվել է որպես Կարեն Դեմիրճյանի հուշարձանի ձեռքբերման կանխավճար:

85. Անդամակցության վճարներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 14,864.0 հազար դրամ՝ նախատեսված 31,400.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 47.3%, որն իր մեջ ներառում է Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիային, Եվրոպական քաղաքների ասոցիացիային (EUROCITIES), Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի և Հայաստանի համայնքների միությանը հատկացվող գումարները:

86. Նախադպրոցական ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 8,682,351.5 հազար դրամ՝ նախատեսված 9,022,741.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.2%, որի շրջանակներում ֆինանսավորվել է թվով 153 մանկապարտեզ: Մանկապարտեզները ֆինանսավորվել են փաստացի ծախսի հաշվարկների հիման վրա: 13,432.3 հազար դրամն ուղղվել է մանկապարտեզների համար դիմակների ձեռքբերմանը, 897.1 հազար դրամը՝ թիվ 175 դպրոցի նախակրթարանի համար սննդի ձեռքբերմանը:

87. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 76,300.1 հազար դրամ 160,000.0 հազար դրամ գումարի դիմաց: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և Երևան քաղաքի մանկապարտեզներին բաշխվել է շուրջ 11905 մահճակալ, սեղան, աթոռ, պահարան, լվացքի մեքենա, ափսե, բաժակ, գազօջախ:

88. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 26,529.1 հազար դրամ՝ նախատեսված 26,529.1 հազար դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն,

օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորվել է «Երևանի հ.175 դպրոց» ՊՈԱԿ-ը:

89. Հանրակրթական ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,199,432.5 հազար դրամ՝ նախատեսված **17,195,191.7 հազար** դրամ գումարի դիմաց, որի շրջանակներում՝ որպես պատվիրակված լիազորություն, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով ֆինանսավորվել են Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող թվով 153 դպրոցները:

90. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,961,741.5 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4,312,984.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.9%, որից՝ որպես ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից հատկացված սուբվենցիա 55,863.8 հազար դրամով ֆինանսավորվել են Երևանի թվով 2 սպորտ-դպրոցներ, իսկ 3,903,183.5 հազար դրամը ուղղվել է թվով 74 երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների, շախմատի դպրոցների ֆինանսավորմանը: 2,685.0 հազար դրամ գումարը տրամադրվել է դպրոցականների ամառային հանգստի համար տրանսպորտի վարձակալության ծառայությանը:

91. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսված 110,000.0 հազար դրամի դիմաց 82,417.3 հազար դրամով իրականացվել է Շենգավիթ վարչական շրջանի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի տանիքի հիմնանորոգում:

92. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում ծրագրով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 6,793.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորություն՝ հաշվի առնելով կրթահամալիրի առաձնահատկությունները:

93. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 96,754.4 հազար դրամ՝ նախատեսված 132,961.2 հազար դրամի դիմաց, որից 66,481.0 հազար դրամը հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, որն ուղղվել է Երևան քաղաքի թվով 26 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և

լարային նվագարանների դասարաններում սովորող աշակերտների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

94. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսված 107,500.0 հազար դրամ գումարի դիմաց փաստացի 74,752.9 հազար դրամ գումարով մարզադպրոցների և երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել թվով 1382 անուն երաժշտական գործիքներ, մարզագույք, գրասենյակային գույք, 1247.5 հազար դրամով ձեռք է բերվել խոտհնձիչ մեքենա:

95. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով 1,687,519.4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1,181,339.5 հազար դրամ, որի շրջանակներում հիմնանորոգվել են Դավթաշեն վարչական շրջանի հ. 58, Շենգավիթ վարչական շրջանի հ. 127, հ. 144, հ. 146, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 82, հ. 86, հ. 97, Նոր Նորք վարչական շրջանի հ. 98, հ. 104, հ. 107, Աջափնյակ վարչական շրջանի հ. 35, Կենտրոն վարչական շրջանի հ. 5 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:

96. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 43,608.8 հազար դրամ՝ նախատեսված 55.000.0 հազար դրամի չափով, որի շրջանակներում իրականացվել «Ուսուցչի օր», կազմակերպվել են առարկայական օլիմպիադաներ, մանկավարժների խրախուսում, իրականացվել են կիրառական ռազմագիտության, քաղաքացիական պաշտպանության, հանրային առողջապահության միջոցառումներ, դաստիարակների և դայակների մեթոդական վերապատրաստումներ և այլ միջոցառումներ:

97. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ), Հանրակրթական դպրոցներին գույքով եւ տեխնիկայով ապահովում (պատվիրակված լիազորություններ), Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը(պատվիրակված լիազորություններ)

ծրագրով նախատեսված 100,092.8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 93,858.3 հազար դրամ:

98. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 7,822.4 հազար դրամ՝ նախատեսված 16,524.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 47.3%:

99. Երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանություն ծրագրով ծախսը կազմել է 3,288.5 հազար դրամ նախատեսված 15,000.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում երեխաները ապահովվել են գրենական պիտույքներով:

100. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրման իրականացում, Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում, Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն, Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն ծրագրերով նախատեսված 382,330.8 հազար դրամի դիմաց կատարվել է 29,078.9 հազար դրամի ծախս, որի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2021 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան դիմած սոցիալական խոցելի խմբերին դասվող անձանց, աջակցություն է ցուցաբերվել բնակչության համապատասխան խմբերին և այլն:

101. Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 43,730.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 52,200.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 83.8%, որի շրջանակներում աջակցություն է տրամադրվել թվով 10 հասարակական կազմակերպությունների:

102. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 143,477.0 հազար դրամ՝ նախատեսված 143,478.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը

կազմել է 99.9%: Բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

103. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 647,555.6 հազար դրամ՝ նախատեսված 648,936.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.8%, որի սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աշխատակիցները ապահովվել են սոցիալական փաթեթով:

104. Առողջության ապահովագրություն ծրագրով փաստացի ծախսը կազմել 351,036.0 հազար դրամ՝ նախատեսված 392,004.8 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում առողջապահական ապահովագրություն են ստացել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները, ՔԿԱԳ, ՍԾՏԲ աշխատակիցները, «Երևանտրանս» ՓԲԸ վարորդները, «ԳՇՊՇ» ՓԲԸ սպասարկող անձնակազմը, «Կառավարման տեխնոլոգիաներ» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման հիմնարկ»-ի, «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, Երևան հիմնադրամի, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների, շախմատի դպրոցների, գրադարանների, թատրոնների և թանգարանների շուրջ 10641 աշխատակիցները:

105. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ծրագրով հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդի ծախսը կազմել է 7,524,519.6 հազար դրամ, որից 7,512,897.0 հազար դրամը Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցման, Արգավանդ -Շիրակ ճանապարհահատվածի 2.7 կմ երկարությամբ /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման, հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (չնախատեսված ծախսեր՝ բողոքներ, շտկիչ միջոցառման պլանի (ՇՄՊ) շրջանակներում փոխհատուցումների, իրավաբանական ծառայությունների, ծրագրի ֆինանսական աուդիտի դիմաց ուղղվել է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ

ծրագրին: Կնքված դրամաշնորհային պայմանագրերով 3,000.0 հազար դրամն ուղղվել է Կոռնիձոր գյուղում կառուցվող նոր պուրակի համար մանկական խաղատեսակների ձեռքբերման և տեղադրման նպատակով, 8,622.5 հազար դրամը՝ հրթիռակոծման հետևանքով խաթարված Այգեձոր գյուղի մանկապարտեզի շենքային պայմանների բարելավման համար:

Ֆոնդային մասի պահուստային ֆոնդի ծախսը կազմել է 107,544.6 հազար դրամ, որից 72,500.0 հազար դրամը ուղղվել է պոմպակայանի ձեռք բերմանը, 24,868.0 հազար դրամը՝ Թևոսյան 9 հասցեի անշարժ գույքի և հողամասի ձեռքբերմանը, 10,009.3 հազար դրամը Հակատուբերկույրզային դիսպանսեր ՓԲԸ-ի անշարժ գույքի, հողամասի և ապրանքների ձեռքբերմանը, 167.2 հազար դրամը՝ լուծարվող Աջափնյակ կանաչապատում ՓԲԸ-ի, Կանաչ Բարձունք ՓԲԸ-ի և Վարդավառ զբոսայգի ՓԲԸ-ի լուծարման գույքի գնմանը:

Վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս գումար չի հատկացվել:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն կատարվել է 1,376,367.6 հազար դրամ հավելուրդով նախատեսված (ճշտված) 23,835,086.9 հազար դրամ պակասուրդի դիմաց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	Արմինե Քարամյան (առաջարկն ուղարկվել է 22.02.2022թ. հ. Ք182 գրությամբ)	1.Բյուջեի կատարողականում առկա է թվաբանական սխալ՝ կապված նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերության հետ՝ փաստացին ճշգրտվածի նկատմամբ կազմելով 73.3%: Բյուջեի փաստացի եկամուտները՝ ճշտվածի նկատմամբ կազմել է 95.3% և բյուջեն ճշտված պակասուրդի (23,835,086.9 հազ. դրամ) դիմաց կատարվել է հավելուրդով (1,376,367.6 հազ. դրամ) 2.Մինչև 2001 թվականը եկամտահարկը մուտք է եղել համայնքային բյուջե, սակայն 2001 թվականից հետո աստիճանաբար նվազել է, այնուհետև՝ զրոյացել է: Առաջարկություն–Կրկին որոշակի տոկոսային չափով եկամտահարկը հավաքագրվի համայնքային բյուջե: 3.Երևան քաղաքի բյուջեի 2021թ. կատարողականի հաշվետվության մեջ նշվում է, որ բյուջեի փաստացի և ճշտված ծախսերի տարբերությունը պայմանավորված	1. Ֆինանսական վարչության կողմից նշվեց, որ չկա որևէ թվաբանական սխալ: <i>/Ֆինանսական վարչություն/</i> 2.Պետական բյուջեի մասին օրենքում եկամտահարկի մասով կա հստակ սահմանում: <i>/Ֆինանսական վարչություն/</i> 3.Թերի կատարումը կախված է որոշակի ծրագրերից, և անկախ ամեն ինչից՝ գնումների գործընթացն իրականացնելիս առաջանում է խնայողություն, որը չի նշանակում աշխատանքների վատ կատարում: <i>/Ֆինանսական վարչություն/</i>	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, պատվիրակված լիազորությունների մասամբ չկատարմամբ: Խնայողությունները շատ լավ է, բայց ոչ այն դեպքում, երբ դա կատարվում է դրամաշնորհային ծրագրերի թերի կատարմամբ, օրինակ՝ նախատեսվածից 9% փաստացի կատարմամբ, մեկ այլ դրամաշնորհային ծրագրով 12% փաստացի կատարմամբ, 2021թ. Երևան քաղաքի ծրագրով նախատեսված 15 նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և վերանորոգման դիմաց՝ կատարվել է 8-ը, որոնցից 2-ը կշարունակվեն 2022թ.: Բացի այս կատարված ծախսերի մեծ մասը թերի է՝ շատ քիչ հատվածն է, որ կատարվել է նախատեսվածի չափով կամ քիչ տարպերությամբ: 4. Հ. 15 պոլիկլինիկայում տեղի է ունեցել վերանորոգում և վերանորոգվել է ինֆեկցիոն սենյակը, մեկուսարանը և փոխվել են դռները, սակայն այնտեղ շատ վատ վիճակում է գտնվում լաբորատորիան, որն ըստ էության շատ ավելի կարևոր է:	4.Երևան համայնքի բյուջեով հ. 15 պոլիկլինիկայում կատարվում են սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ, որոնք ոչ պակաս կարևոր են, իսկ պոլիկլինիկայի վերանորոգումն իրականացվում է փուլ առ փուլ: 2022 թվականին ևս նախատեսվում է իրականացնել վերանորոգման աշխատանքներ: <i>/Շինարարության և բարեկարգման վարչություն/</i>	
2.	Մարի Զաքրյան «Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն» ՀԿ-ի նախագահ	1.Դալմայի այգիների հողատարածքների օտարման արդյունքում ինչքան գումար է մուտքագրվել համայնքային բյուջե: 2.Արդյոք բյուջեից հատկացումներ եղել են Երևան քաղաքի շրջակա միջավայրի տարրերի ուսումնասիրության նպատակով: 3.2021թ. առաջարկություններ են ներկայացրել	1.Դալմայի հողերի հետ կապված պետք է արվի ուսումնասիրություն, քանի որ ներկա պահին չկա հստակ տեղեկատվություն՝ արդյոք տվյալ տարածքում հող օտարվել է թե՛ ոչ: <i>/Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն/</i>	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		Երևանի քաղաքապետարան, մասնավորապես Հրազդան գետի և Երևանյան լճի մաքրման ծրագրերի հետ կապված, որին ի պատասխան ներկայացվել էր տեղեկատվություն առ այն, որ ծրագիրը հանրային իրազեկում է ստացել, անցել է հանրային քննարկումների փուլ: Իրազեկումը ճիշտ չի կազմակերպվում:	2.Ուսումնասիրություններ են կատարվել Երևանյան լճի և հարակից վնասակար բույսերի մասով, 2021թ. բյուջեով նախատեսվել է վնասակար բույսերի դեմ պայքարի և դրանց կանխարգելման միջոցառումներ: Օդի աղտոտվածության առումով ևս իրականացվել են ուսումնասիրություններ, առկա են համագործակցություններ միջազգային կազմակերպությունների հետ և այս տարի նախատեսվում է օդի 5 սենսորների տեղադրում, որոնք չափելու են օդում կախված մասնիկները՝ ՊՄ_{2.5}, ՊՄ₁₀-ը նաև ազոտի աղտոտվածության աստիճանը: <i>/Բնապահպանության վարչություն/</i> 3.Հրազդան գետի և Երևանյան լճի մաքրման ծրագրերի մասով ընդունվել է ավագանու համապատասխան որոշում, որը մինչև ընդունվելն անցել է օրենքով սահմանված ընթացակարգով, նաև հրապարակվել է yerevan.am կայքում: Առաջարկվեց կրկին ներկայացնել առաջարկությունները, որոնք անպայման կուսումնասիրվեն: <i>/Բնապահպանության վարչություն/</i>	
3.	Ռուզաննա Ղազարյանը	1.«Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին»	1.Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը	Նախագծում փոփոխություն չի

	«Դալմա-Սոնա» կրթամշակութային, սոցիալ- բնապահպանական հիմնադրամի նախագահ	Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի 38 կետում նշված է հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ: Ո՞ր հատակագծին է խոսքը վերաբերում	հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի 38 կետում նշված է հատակագիծը բերաբերում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծին: Խոսքը նա մասին է, որ երբ քաղաքացին ինչ որ հարցով դիմում է և իրականացնում է քաղաքաշինական ծրագիր՝ իրեն տրամադրվում է հատակագիծ (իր դիմումի հիման վրա): <i>/Ֆինանսական վարչություն/</i>	կատարվել
--	--	--	--	-----------------

ԱՍՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ, ԱՌԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ, ԱՌԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՐՑԱԴՐՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ/ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	2	3	4	5
1.	-	-	-	Ներկայացված առաջարկությունների և առարկությունների արդյունքում նախագծում փոփոխություններ չեն կատարվել

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ